# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան 15/10/2021

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N -
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 2 անդամներ:

Բացակա էին՝ Նիկոլայ Աբրահամյանը, Հայկ Ալեքսանյանը, Վահե Ամիրխանյանը, Տիգրան Բաբայանը, Նարեկ Գալստյանը, Արման Գրիգորյանը, Արթուր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Տիգրան Ղազարյանը, Գոռ Ղալեչյանը, Նորայր Միքայելյանը, Անդրանիկ Նարինյանը, Արմեն Քոսակյանը

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>** Աննա Չոբանյանը, Տիգրան Ղազարյանը, Արմեն Պողոսյանը, Ջանինա Սարգսյանը

**<u>Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Վահագն Գևորգյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը</u>**

### *2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ղեկ. ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 08 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.

3) Աբովյան համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 62-Ա

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

4) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

5) Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին.

6) Աբովյան համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 6-ի N 173-Ա, 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 93-Ա և N 94-Ա որոշումները չեղյալ ճանաչելու մասին.

7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրապետության պողոտայի 7-րդ շենքի թիվ 42 բնակարանն անհատույց օտարելու մասին.

8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրապետության պողոտայի 7-րդ շենքի թիվ 75, 77 բնակարանն անհատույց օտարելու մասին.

9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 6 շենքի թիվ 94 սենյակն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Սևանի փողոցի 2/1 շենքի թիվ 108 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հատիսի փողոցի 1-ին թաղամասի թիվ 40/2/3 հասցեում գտնվող հողամասն Արմեն Բալյանին ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգի 28-րդ կետի համաձայն 2021 թվականի հոկտեմբերի 15-ի արտահերթ նիստը չկայացավ՝ նիստի իրավազորությունը չապահովվելու պատճառով:

Ավագանու անդամներ

ԼԵՎՈՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՉԱՏՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Արուսյակ Առաքելյանը ____________________